# ՏԵՂԵԿԱԳԻՐ / NEWSLETTER

# 2015

Հուլիս-դեկտեմբեր/July-December



## ՀԿԽԸ պատվիրակությունը մասնակցեց ԿԽԿՄ կանոնադրական հանդիպումներին

2015թ. դեկտեմբերի 4-ից 10-ը Շվեյցարիայում՝ Ժնևում, տեղի ունեցան Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման կանոնադրական հանդիպումները, որին մասնակցեց նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության պատվիրակությունը: ՀԿԽԸ-ն ներկայացնում էին Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, Միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ Մարիանա Հարությունյանը, Լրատվական և լուսաբանման բաժնի վարիչ Նունե Գրիգորյանը և Երիտասարդական բաժնի կամավոր Անի Միրաքյանը:

Կանոնադրական հանդիպումների շրջանակներում անցկացվեցին ԿԽՄՖ Գլխավոր ասամբլեան և Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի շարժման Պատվիրակների խորհուրդը:

ԿԽՄՖ Գլխավոր ասամբլեան գումարվում է երկու տարին մեկ և ֆեդերացիայի բարձրագույն ղեկավար մարմինն է: Այս տարի ևս ավելի քան 1900 պատվիրակներ և Ազգային 190 ընկերությունների ներկայացուցիչներ հանդիպեցին՝ նշելու իրենց ձեռքբերումները, քննարկելու մարդասիրական խնդիրները և որոշելու հետագա ռազմավարական ուղղությունները: Այս անգամ Ասամբլեայի ուշադրության կենտրոնում էին հետևյալ թեմաները՝ Միջազգային մարդասիրական իրավունքի կիրառումը և պահպանումը, Առողջապահությունը՝ վտանգի մեջ, Սեռական և գենդերով պայմանավորված բռնությունը, Անձնակազմի և կամավորների անվտանգությունը և ակտուալ այլ թեմաներ՝ այդ թվում նաև միգրացիայի վերաբերյալ N 3 արձանագրության իրագործման ընթացքը:

## Հայկական Կարմիր խաչի ընկերությունը շնորհակալագիր ստացավ ՏԿԱԻ նախարարության կողմից

Հոկտեմբերի 19-ին ՀՀ ՏԿԱԻ նախարարությունում կայացավ Եվրոպական հանձնաժողովի՝ Աղետներին նախապատրաստման (ԴԻՊԵԿՈ 3) 3-րդ ծրագրի եզրափակման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա էին տարբեր գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Այն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով վարչության (ECHO) ֆինանսավորմամբ և ՀՀ ՏԿԱԻ, ԿԳ, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ու Աղետների ռիսկի

## ARCS Delegation participated in the Statutory Meetings of the International Movement of Red Cross and Red Crescent in Geneva, Switzerland

From 4 – 10 December 2015 in Geneva, Switzerland, the Statutory Meetings of the International Movement of Red Cross and Red Crescent took place. The delegation of Armenian Red Cross Society comprised of Dr. Anna Yeghiazaryan, Secretary General, Mariana Harutyunyan, Head of International Affairs Department, Nune Grigoryan, Head of Information and Dissemination Department and Ani Mirakyan, Youth Department volunteer represented ARCS at the Meetings.

In the framework of the Meeting the IFRC General Assembly and The Council of Delegates of the Red Cross Red Crescent Movement were organized.

The General Assembly meets every two years and is the supreme governing body of the IFRC, where over 1,900 delegates and all 190 member National Societies gather to celebrate their achievements, discuss humanitarian challenges and decide on future strategic directions. This year, the General Assembly focused on the following topics: the use and maintenance of International Humanitarian Law, Healthcare in danger, Sexual and Gender Based Violence, Security of the personnel and volunteers, and other relevant topics, including the implementation of Protocol N 3 on Migration.

## ARCS received acknowledgement by RA Ministry of Territorial Administration and Emergency Situations

On October 19, the “Disaster Risk Reduction in Armenia” program (DIPECHO Phase III) close-out event was held at the RA Ministry of Territorial Administration and Emergency Situations. The event was attended by representatives from various government agencies, international organizations and mass media. Funded by the European Commission’s Humanitarian Aid and Civil Protection Department (ECHO) and implemented by the Armenian Red Cross Society, OXFAM Armenia, UNICEF, “Save the Children” and UNISDR in collaboration with the RA Ministries of Territorial Administration and Emergency Situations, Education and Science, Labor and Social Affairs and the Disaster Risk Reduction National Platform, the program was aimed at increasing resilience and reducing vulnerability of children and communities in areas prone to natural hazards.

նվազեցման ազգային պլատֆորմի հետ համագործակցությամբ: Ծրագրի կյանքի կոչման գործում ներգրավված էին նաև Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Օքսֆամը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, Սեյվ դը չիլդրեն կազմակերպությունը և ՄԱԿ-ի աղետների նվազեցման միջազգային ռազմավարության գրասենյակը: Ծրագրի նպատակն էր բարձրացնել աղետներին դիմակայելու կարողությունների մակարդակը և նվազեցնել երեխաների և համայնքների խոցելիությունը՝ բնական աղետներին առավել հակված տարածքներում:

Բարձր գնահատելով այդ ԱՌՆ ոլորտում այդ կազմակերպությունների ներդրումը ՏԿԱԻ փոխնախարար Հ. Մխիթարյանը նախարարության անունից շնորհակալագրեր հանձնեց ծրագրի շրջանակներում ՏԿԱԻ նախարարության հետ ակտիվորեն աշխատող կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ այդ թվում նաև Հայկական Կարմիր խաչի ընկերությանը:

Միջոցառումը շարունակվեց ՏԿԱԻՆ շարահրապարակում, որտեղ ԴԻՊԵԿՈ III-ի գործընկեր կառույցների շահառուներն իրականացրեցին խաղավարժանքներ՝ ցուցադրելով այն գիտելիքներն ու հմտությունները, որ ձեռք են բերել ծրագրերի շրջանակներում:

## Հանգստի և ժամանցի նոր սենյակ՝ Աբովյանի հանրակացարանի տարեցների ու երեխաների համար

Սեպտեմբերի 28-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Հատիսի 4-րդ նրբանցքի Ճարտարագիտական քոլեջի հանրակացարանի՝ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կողմից վերանորոգված հանգստի և ժամանցի սենյակի բացումը: Միջոցառմանը ներկա էին ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ՀՀ ՏԿԱԻ փոխնախարար Հայկարամ Մխիթարյանը, Հայաստանում Լիտվայի դեսպան Էրիկաս Պետրիկասը և Հայաստանում Գերմանիայի Դաշնության դեսպանատան ատաշե Աննամարի Կուլմանը, այլ հյուրեր:



Միջոցառմանը ելույթ ունեցավ 7-ամյա Անուշիկը, որը ներկաներին հիացրեց իր տաղանդով՝ չնայած փոքր տարիքին, նա պրոֆեսիոնալ նվագում է դուդուկ, զուռնա ու դհոլ:

Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» ծրագրի շրջանակներում նախատեսված էր ծառայությունների մատուցման համար տրամադրված տարածքի վերանորոգումը, սակայն, ՀՀ ՏԿԱԻ նախարարության կողմից տրամադրված 40 քառ. մ մակերես ունեցող տարածքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար լրացուցիչ միջոցների անհրաժեշտություն առաջացավ: Այդ միջոցները հայթայթվեցին Գերմանական դաշնության և Լիտվայի դեսպանատների կողմից տրամադրվող փոքր դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում:

## Ավստրիական պատվիրակությունների այցերը Հայկական Կարմիր խաչի ընկերություն

*** Դեկտեմբերի 15-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերությունում էր ավստրիական պատվիրակությունը, որը ղեկավարում էր Ավստրիական զարգացման գործակալության միջազգային ծրագրերի տնօրեն Ռոբերտ Զեյները: Պատվիրակության կազմում էին նաև ավստրիական ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:



On behalf of the Ministry, TAES Deputy Minister H. Mkhitaryan handed diplomas to the representatives of the organizations including Armenian Red Cross Society, who work closely with TAES Ministry in the frames of the project.

During the event, the beneficiaries of "DIPECHO III" partner organizations performed spectacular drills at the site of MTAES.

## Renovated activity room for the children and elderly in Abovyan dormitory was opened

On 28 September, the opening of newly renovated activity room by Armenian Red Cross Society (ARCS), took place in Hatis 4th lane Engineering College dormitory in Abovyan city, Kotayk region. Dr. Anna Yeghiazaryan, ARCS Secretary General, Haykaram Mkhitaryan, RA MTAES Deputy Minister, Erikas Petrikas, Ambassador of Lithuanian Embassy in Armenia and Annemarie Kulmann, Attache of the Embassy of the Federal Republic of Germany attended the event.

7-year-old Anushik performed at the event, who delighted the audience with her talent, despite her young ages, she professionally performes on duduk, zurna and dhol.

In the frames of Armenian Red Cross Society "Psycho-social support for children and lonely elderly refugees" project the renovation of the space for providing services was designed, however, for the renovation works of the 40m$^2$ area provided by RA Ministry of Territorial Administration and Extreme Situations (MTAES) additional funding was needed. The needed funds were raised due to the German Federation and Lithuanian Embassies in RA, in the frames of Small Grant Projects.



## Austrian Delegation visits to Armenian Red Cross Society

*** On 15 December, Austrian Delegation headed by Robert Zeiner, Head of International Projects, Austrian Development Agency, visited ARCS. Mass Media representatives were also among the delegation. The aim of the visit was to monitor the First and Second phases of "Empowering Syrian Armenians and their capacity building", as well as "Building safe and resilient projects".



Այցի նպատակն էր ծանոթանալ «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» ծրագրի առաջին և երկրորդ փուլերի, ինչպես նաև «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի ընթացքին:

Հյուրերը հնարավորություն ունեցան զրուցել ծրագրի շահառու սիրիահայերի հետ և լսել նրանց կարծիքը ծրագրերի ընթացքի ու արդյունավետության մասին: Վերջիններս իրենց գոհունակությունը հայտնեցին Հայկական Կարմիր խաչի կողմից սիրիահայերի համար իրագործվող ծրագրերի վերաբերյալ, որոնց շնորհիվ կարողանում են աշխատել, ապրել և ինտեգրվել հասարակությանը:

Ավստրիացի լրագրողներն այցելեցին նաև մի քանի սիրիահայերի տներ՝ նրանց կենցաղին ու աշխատանքին ավելի մոտիկից ծանոթանալու և ծրագրի ընթացքը լուսաբանելու համար:

*** Սեպտեմբերի 25-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունում էին Ավստրիայի Արտաքին գործերի նախարարության պատվիրակ Դոնատուս Կոկը և Հայաստանում և Վրաստանում Ավստրիայի զարգացման գործակալության ներկայացուցիչները:

Այցելության նպատակն էր ծանոթանալ ավստրիական կառավարության և Ավստրիական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ իրականացվող, մասնավորապես՝ սիրիահայերի աջակցության ծրագրերին:

Պարոն Կոկը հետաքրքրվեց հատկապես կամավորների ներգրավման համակարգով, պետական կառույցների և մասնավոր սեկտորի հետ Հայկական Կարմիր խաչի ընկերության համագործակցությամբ:

*** Օգոստոսի 17-18-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունում էր Ավստրիական Կարմիր խաչի պատվիրակությունը, որի կազմում էին ԱԿԽ Գլխավոր քարտուղարի տեղակալ Մայքլ Օփրիեսնիգը, Միջազգային համագործակցության Եվրոպական թիմի ղեկավար Էդուարդ Տրամպուշը, Հաղորդակցման բաժնի ղեկավար Անդրեա Ուինթերը, Հաղորդակցման բաժնի կամավորներ Բարբարա Սթոեքլը և Ֆրեդերիկ Ռիֆերը:

Այցի նպատակն էր ծանոթանալ Ավստրիական Կարմիր խաչի ֆինանսավորմամբ իրականացվող՝ մասնավորապես Սիրիահայերի և հանրակացարանաբնակ փախստական միայնակ ծերերի և երեխաների աջակցության ծրագրերի ընթացքին, ինչպես նաև հեռուստառեպորտաժ պատրաստել՝ ավստրիական հեռուստաընկերությամբ հեռարձակելու համար:

Հանդիպմանը ներկա էին նաև սիրիահայեր, որոնք Հայկական Կարմիր խաչի ընկերությունից աջակցություն էին ստացել:

Հանդիպմանը ներկա սիրիահայերը պատմեցին Սիրիայից Հայաստան տեղափոխվելու և նոր կյանք սկսելու իրենց պատմությունները: Նրանք բոլորն էլ մեծ դժվարությունների ու կորուստների միջով էին անցել, բայց ստացած աջակցության շնորհիվ կարողացել էին հաստատվել հայրենիքում:

Ավստրիական Կարմիր խաչի ներկայացուցիչները եղան նաև սիրիահայերի կողմից շահագործվող սննդի կետերում, որոնք բացվել են Հայկական Կարմիր խաչի ընկերության տրամադրած գործիքների շնորհիվ, և հետևեցին, թե ինչպես են պատրաստվում ավանդական սիրիական ուտեստները:

Այնուհետև, նրանք այցելեցին Աբովյան քաղաքի և Երևանի Արցախի փողոցի հանրակացարաններ: Հյուրերը հատկապես տպավորված էին երիտասարդ կամավորների ոգևորված ու նվիրված աշխատանքից:

Այցելության երկրորդ օրը Ավստրիական Կարմիր խաչի պատվիրակությունը այցելեց Լոռու մարզի Վահագնի համայնք, որտեղ ծանոթացավ կանխարգելման ծրագրին:



The delegation members had an opportunity to meet project beneficiaries: Syrian Armenians and listen to their opinion on project efficiency. They expressed their contentment on the projects developed and implemented for Syrian Armenians to provide them with an opportunity to work and integrate into the society.

*** On 25 September, Donatus Kock, the Deputy Director of Europe Integration Foreign Affairs, Federal Ministry, Republic of Austria and Representatives of Austrian Development Agency in Armenian and in Georgia visited Armenian Red Cross Society.



The aim of the visit was to get acquainted with the projects, funded by Austrian government and Austrian Red Cross, particularly the ones that, have been implemented for Syrian Armenians,

Mr. Kock was particularly interested in the system of involving and motivating volunteers, in cooperation of ARCS with the government agencies and the private sector.

*** On 17-18 August, Austrian Red Cross delegation visited Armenian Red Cross Society. The delegation comprises Mr. Michael Opriesnig, Deputy Secretary General, Mr. Eduard Trampusch, International Cooperation, Team Leader Europe, Ms. Andrea Winter, the Head of Communication Department, Ms. Barbara Stoeckl and Mr. Friedrich Riffer, volunteers of the Communication Department.

The aim of the visit was to get acquainted with the process of Austrian Red Cross funded projects, particularly supporting Syrian Armenians and Psycho-social service for lonely elderly and children refugees living in dormitories projects, as well as prepare video story to broadcast by Austrian TV.

The meeting was attended also by more than 10 Syrian Armenians, who had received support from the Armenian Red Cross Society.

Syrian Armenians told their stories about how they had fled to Armenia from Syria and started a new life. They all had gone through major difficulties and losses, but thanks to the support they could settle down in the Homeland.

Austrian Red Cross representatives visited also a small cafes operated by Syrian Armenians, which were opened thanks to the tools provided by the Armenian Red Cross Society, and they followed the cooking of traditional Syrian dishes. Afterwards, they visited dormitories of Yerevan and Abovyan cities. The guests were especially impressed by the work of dedicated and enthusiastic volunteers. The second day of the visit, Austrian Red Cross delegation visited the Vahagn community, Lori region where they got acquainted with small mitigation project.

## Գրենական պիտույքներ՝ սիրիահայ երեխաներին

Հայկական Կարմիր խաչի ընկերության գլխավոր գրասենյակում ամառվա ամիսներին իրականացվեց՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Սիրիահայերի ինտեգրման խթանում» ծրագրի շրջանակներում սիրիահայ դպրոցականների գրենական պիտույքների բաշխումը: Ծրագրի շրջանակներում գրենական պարագաներ տրամադրվեցին ավելի քան 800 սիրիահայ աշակերտի: Փաթեթները, որոնք ներառում են տետրեր, գրիչներ, նկարչական ալբոմներ, գունավոր մատիտներ, գունավոր թղթեր, ջրաներկեր և այլն, կազմվել են ըստ ուսումնական խմբերի՝ տարրական, միջին և ավագ դասարաններ:



## Ամառային ճամբար՝ Սիրիահայ երիտասարդների համար

Սեպտեմբերի 18-21-ը Ծաղկաձորում սիրիահայ երիտասարդները մասնակցեցին «Երիտասարդների կայուն զարգացումը» ծրագրի շրջանակներում կազմակերպված ճամբարին: Ճամբարում համախմբվել էին այն երիտասարդները, ովքեր շարունակելու են աշխատանքը ծրագրում, կազմակերպելու են միջոցառումներ և ներգրավելու այլ սիրիահայ երիտասարդների՝ միջոցառումներին մասնակցելու համար: Ճամբարի ընթացքում երիտասարդները ծանոթացան ծրագրին, սովորեցին ինչպես կազմակերպել միջոցառումները, պլանավորել իրենց անելիքները և, նույնիսկ, գործնականում կիրառեցին իրենց գիտելիքները:

Երիտասարդները խոսեցին նաև խնդիրների լուծման ստեղծագործ ուղիների և սոցիալ-հոգեբանական աջակցության մասին: Տարբեր թեմաների շուրջ խոսելուց բացի երիտասարդների առօրյան անցավ շատ ակտիվ՝ քննարկումներով լեցուն, և ճամբարն ավարտվեց երիտասարդների կողմից կազմակերպված խարույկով և կիթառի հնչյուն ելևէջներով:

## Աշտարակի թիմն առաջին տեղը գրավեց Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորական թիմերի հանրապետական մրցույթում

Սեպտեմբերի 5-ին, Ծաղկաձորի Կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) կամավորական թիմերի հանրապետական մրցույթը:

Մրցույթին մասնակցում էր 10 թիմ. 2-ը՝ Երևանից, 2-ը՝ Իջևանից, թիմեր Այգեձորից, Բերդից, Վանաձորից, Եղեգնաձորից և Աշտարակից, ևս մեկ թիմ Երևանից, որը ներկայացրեց Հայկական Կարմիր խաչի ընկերությունը սեպտեմբերին Ռումինիայում կայացած Առաջին օգնության 2015թ. Եվրոպական մրցույթին, մասնակցեց արտամրցութային կարգով:

Մասնակիցների՝ Առաջին օգնության հմտությունները ստուգելու համար նախապատրաստվել էր 7 կայան, որոնցից մեկը՝ Շվեյցարիայի սամարացիների ֆեդերացիայի կողմից: Ֆեդերացիայի հետ համագործակցությունն սկսվել է 2000 թվականից, և կազմակերպությունը մշտապես աջակցել է ԱՕ մրցումների և դասընթացների իրականացմանը:

Կայաններում բեմականացվեցին դժբախտ պատահարներ՝

## Stationary for Syrian-Armenian school children

During the summer months at the Headquarters of Armenian Red Cross Society distribution of school stationary to Syrian Armenian schoolchildren was carried out in the frames of “Promoting integration of Syrian Armenians” project, financed by European Union. Packages, including exercise books, pens, albums for painting, colored pencils, colored papers, watercolors and etc., were drawn up for 800 schoolchildren by educational groups such as elementary, middle and high school.

## Camp for Syrian Armenian Youth in Tsakhkadzor

On 18-21 September Syrian Armenian Youngsters participated in Summer Camp in the frames of the “Youth resilience” project. The Camp gathered those, who will continue to work for the project, organizing events and involving other Syrian Armenians to participate in the events.

During the Camp young people learnt about the project, event organization and planning principles, as well as completed practical tasks. They discussed also creative problem solutions and psycho-social support. Participants of the Camp had very active days full of entertainment, discussions, bonfire and guitar sounds.



## Ashtarak team took first place in the ARCS First Aid National Competition

On 5 September, in the central square of Tsakhkadzor National competition of Armenian Red Cross Society (ARCS) volunteer teams took place.

10 teams participated in the competition, 2 from Yerevan, 2 from Ijevan, teams from Aygedzor, Berd, Vanadzor, Yeghegnadzor and Ashtarak. Another team from Yerevan, who represented Armenian Red Cross Society in the First Aid European competition which took place in September 2015, Romania, participated in the competition as a guest.

7 stations were prepared to check the First Aid skills of the participants, including one by the Federation of the Swiss Samaritans. The partnership with the Federation started from 2000, the organization has always supported the implementation of the FA competitions and trainings.

Foreign body, severe bleeding, shock, head injury, loss of consciousness, closed abdominal trauma, fractures and other accidents were presented in the stations.

The 3rd place took Yerevan 2 team, Vanadzor and Ijevan shared the 2nd place and the 1st place took Ashtarak team. Federation of the Swiss Samaritans also prepared prizes and by their ranking the 3rd place took Yerevan 2 team again, the 2nd place took Berd, and the First place was again given to the Ashtarak team.

Due to the preparatory trainings of the Competition more than 100 young people were introduced and gained First Aid knowledge and skills, and now they are ready to reach out and help save lives. This knowledge is particularly important for Armenia’s borderline communities.

օտար մարմին, ուժեղ արյունահոսություն, շոկ, գլխի վնասվածք, գիտակցության կորուստ, որովայնի փակ վնասվածք, կոտրվածք և այլն:

Պայքարի արդյունքում 3-րդ տեղը զբաղեցրեց Երևան 2 թիմը, 2-րդ տեղը կիսեցին Իջևանն ու Վանաձորը, իսկ 1-ին տեղում Աշտարակի թիմն էր: Իրենց մրցանակային տեղերը սահմանեցին նաև Շվեյցարիայի սամարացիների ֆեդերացիայի ներկայացուցիչները, ըստ որի՝ կրկին 3-րդ տեղում էր Երևան 2 թիմը, 2-րդը՝ Բերդը, իսկ առաջին պատվավոր տեղում իր լավագույնը լինելը հաստատեց Աշտարակի թիմը:

Մրցույթի և դրան նախորդած նախապատրաստական դասընթացների շնորհիվ ավելի քան 100 երիտասարդներ ծանոթացան ու տիրապետեցին Առաջին օգնության գիտելիքներին ու հմտություններին, և անհրաժեշտ պահին կարող են օգնության հասնել ու կյանքեր փրկել: Այս գիտելիքները հատկապես կարևոր են Հայաստանի սահմանամերձ համայնքների համար:

Միջոցառումն անցկացվեց ՀԿԽԸ, ԿԽՄԿ և Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտեմբերգի մասնաճյուղի հետ համագործակցության ծրագրերի շրջանակներում:

## Հայ-ռուսական սլավոնական համալսարանի թիմը հաղթեց Միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ազգային դատախաղ-մրցույթում

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը Աղվերանում անցկացվեց Միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ազգային դատախաղ-մրցույթը, որտեղ հաղթող ճանաչվեց Հայ-ռուսական սլավոնական համալսարանի թիմը: Թիմի կազմում հանդես էին գալիս ԲՈՒՀ-ի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ Նվարդ Ղազարյանը, Աննա Յախշիբեկյանը և Լիլիթ Մարտիրոսյանը:

Դատախաղը բաղկացած էր 5 փուլից: Առաջին չորս փուլերին մասնակցում էին բոլոր 7 թիմերը՝ հայաստանյան հետևյալ բուհերի իրավագիտության ֆակուլտետներից՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամ, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, ՀՀ ՊՆ Ռազմական ինստիտուտ, Գավառի պետական համալսարան, Արցախի պետական համալսարան:

Այդ փուլերի արդյունքների համաձայն ժյուրին, որի կազմում ընդգրկված են իրավագիտության ոլորտում Հայաստանի առաջատար մասնագետներ, այդ թվում՝ ի.գ.թ. Վլադիմիր Վարդանյանը, ի.գ.թ. Լևոն Գևորգյանը, ի.գ.թ. Արա Խզմալյանը, ի.գ.թ. Տարոն Սիմոնյանը և ԿԽՄԿ իրավաբան Իռեն Ալոյանը, ընտրեց երկու թիմ՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարան հիմնադրամի և Հայ-ռուսական սլավոնական համալսարանի թիմը:

Եզրափակիչ փուլը տեղի ունեցավ նոյեմբերի 1-ին, որի արդյունքների համաձայն էլ հաղթող ճանաչվեց Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի թիմը:

Հաղթողները, որպես պարգև ստացան դյուրակիր համակարգիչներ (տաբլեթներ), մասնագիտական գրքեր, ինչպես նաև մրցույթի հաղթական գավաթը, որը հաղթող թիմին փոխանցեց նախորդ տարի հաղթանակ տարած՝ Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամի թիմը:




The event was held in the frames of ARCS, ICRC, German Red Cross Baden-Wurttemberg branch cooperation projects.





## Russian-Armenian (Slavonic) University team won the IHL National Moot Court Competition, 2015

On 30 October - 1 November, National Moot Court competition on International Humanitarian Law was held in Aghveran, where Russian-Armenian (Slavonic) University team became the winner. The team was composed of Law Faculty students: Nvard Ghazaryan, Anna Yakhshibekyan and Lilit Martirosyan.

The Moot Court Competition consisted of 5 rounds: during the first four rounds all 7 teams from Law faculties of Universities were participating: French University in Armenia Foundation, Russian-Armenian (Slavonic) University and RA Military Institute named after V.Sargsyan, Gavar State University and Artsakh State University.

According to the results of the rounds, the Jury, comprised of Armenian leading experts in the field of Law, including Dr. Vladimir Vardanyan, PhD, Dr.Levon Gevorgyan, PhD, Dr. Ara Khzmalyan, PhD, Dr. Taron Simonyan, and ICRC Lawyer Iren Aloyan, chose two teams representing French University in Armenia Foundation and Russian-Armenian (Slavonic) University to compete for the Prize.

The final round was held on 1 November, and the Russian-Armenian (Slavonic) University team was awarded the first place.

The winners received Tablets, professional books, as well as the Cup of the competition; which was given to the winning team by the team of French University, as they were the winners in last year Competition.



## Անհայտ կորած անձանց հարազատների գոբելենների ցուցահանդես Վեդիում

Սեպտեմբերի 28-ին Վեդի քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ ցուցահանդես, որտեղ ներկայացված էին Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորածների ընտանիքների անդամների կողմից պատրաստված գոբելենները: Ցուցադրված էր 36 աշխատանք՝ այդ թվում նաև անհայտ կորածների դիմանկարները: Դրանց հեղինակները 8 անհայտ կորածների կանայք էին:

Միջոցառմանը ներկա էին Վեդիի քաղաքապետարանի և դպրոցի աշխատակիցներ, ՀԿԽԸ և ԿԽՄԿ ներկայացուցիչներ: Ցուցահանդեսի բացումից առաջ անհայտ կորածների ընտանիքների անդամներն այցելեցին Վեդի քաղաքի մշակույթի պալատին կից այգի, որտեղ տեղադրված է հուշաքար, ծաղկեպսակ և ծաղիկներ դրեցին՝ ի հիշատակ իրենց անհայտ կորած հարազատների:

Կանայք գոբելեն գործել սովորել են ընդամենը երեք ամսում, նպատակ ունեն հետագայում Երևանում էլ ցուցահանդես բացել, ուզում են նաև նկարել սովորել, որպեսզի այդ հարցում էլ ուրիշի օգնությանը չդիմեն: Ցուցահանդեսի օրն էլ պատահական չէր ընտրված՝ սեպտեմբերի 28-ին են անհայտ կորել Արաբո ջոկատի 8 անդամները: Ամեն տարի այս օրը նրանց հարազատները որևէ կերպ հիշում են այն:

Կարինե Թովմասյանը՝ անհայտ կորած Ավետիք Թովմասյանի կինը, որը ունի 5 երեխա, ցուցահանդեսին մասնակցում էր իր 4 աշխատանքներով.

- Ես շատ մեծ ոգևորությամբ աշխատել եմ այս գործերի վրա: Դիմանկարների մասն էր շատ դժվար սկզբում չէինք համաձայնվում, կասկածում էինք, դժվար էր, փորձում էի նկարը ձեռքով թաքցնել, աչքերի մեջ չէի կարողանում նայել, դողդողալով ի մի բերեցինք: Շատ դժվար էր այսքան տարի հետո փորձել իր նկարը հավաքել, խոսքեր չունեմ ասելու: Ինչ վերաբերում է ցուցահանդեսին՝ շատ գոհ ենք, արդեն ուզում ենք մեր ընտրած նկարների վրա աշխատել: Բոլորն ասում են, որ շատ գեղեցիկ է ստացվել:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ, 2011 թվականից մինչ այժմ իրականացնում է «Սատարում անհայտ կորածների ընտանիքներին» ծրագիրը, որն ուղղված է արձագանքելու անհայտ կորած անձանց ընտանիքների բազմաբնույթ կարիքներին:

Այդ նպատակով անհայտ կորածների ընտանիքների համար կազմակերպվում են հանդիպումներ առողջապահական, սոցիալական, իրավական և այլ ոլորտների մասնագետների հետ, ինչպես նաև մշակութային միջոցառումներ, դասընթացներ: Հանդիպումներն ու միջոցառումները ՀՀ մարզերում իրականացվում են ՀԿԽԸ մարզային և տարածքային մասնաճյուղերի միջոցով:

## ԱԻ արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման կենտրոն

«Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի շրջանակներում Ստեփանավանում՝ Լոռիում, հիմնվել է ԱԻ արձագանքման և հումանիտար աշխատանքների համակարգման կենտրոն:

## Վաղ ազդարարման համակարգ՝ Մանթաշի ջրամբարում

Շիրակի մարզում իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի թիրախային Մեծ Մանթաշ, Փանիկ, Նոր կյանք, Բենիամին և Ազատան համայնքները գտնվում են Մանթաշի ջրամբարի անմիջական և երկրորդային ջրածածկման գոտում: Այդ պատճառով էլ այստեղ իրականացվեցին վաղ ազդարարման համակարգի հիմնման և բնակչության իրազեկմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Նշված հինգ համայնքների համար, Շիրակի մարզի Փրկարարական վարչության հետ համատեղ իրականացվեց քարտեզագրում՝ հաշվարկելով վտանգավոր գոտում գտնվող տների, ենթակառուցվածքների, հասարակական օբյեկտների և

## Gobelin exhibition in Vedi made by the family members of Missing persons

On 28 September, in the House of Culture of Vedi city an exhibition of Gobelin works made by the family members of Missing persons as a result of Nagorno-Karabakh conflict took place. 36 works were presented including portraits of Missing persons. The wives of 8 Missing persons have made the works.



Representatives of Vedi Municipality and school staff, also ARCS and ICRC representatives attended the event. Before the start Missing persons' family members visited the park near the Vedi city House of Culture and set a wreath and flowers at the Memorial, in memory of their missing relatives.

Women studied gobelin in just three months, they aim to open exhibition in Yerevan also, and they also intend to learn to paint, in order not to ask someone else to do it for them. The exhibition date was not chosen randomly, on 28 September 8 members of Arabo detachment gone missing. Every year on this day the relatives of missing persons organize some events in the memory of their missing family members.

Karine Tovmasyan, the wife of missing Avetiq Tovmasyan and mother of 5 children, was participating in the exhibition with her 4 works: "I have been working on these gobelins with great enthusiasm. The Portrait was very difficult to work with, at the beginning we did not agree with this, we had doubts, it was difficult, I tried to hide the portrait with my hands, I could not look in his eyes, I finished it with trembling. It was very difficult to try to collect his picture after so many years; I have no words to say. As for the exhibition we are very pleased, we want to work on the paintings we have chosen. Everyone says the works look very nice.

Armenian Red Cross Society with the support of International Committee of Red Cross, from 2011 till now, implements "Accompanying Families of Missing Persons" project. Meetings with the specialists from Health, Social, Legal spheres were organized for the beneficiary families as well as cultural events and trainings. Meetings and events in the RA regions are being implemented through ARCS Regional and Territorial Branches.

## Emergency Response and Humanitarian Coordination Center in Stepanavan, Lori region was established



բնակչության քանակը ըստ կատեգորիաների, տարանջատելով խոցելի խմբերը՝ հաշմանդամներին, հղի կանանց, միայնակ ծերերին, երեխաներին և այլն: Դրան հաջորդեց տեղական իշխանությունների հետ համատեղ տարհանման պլանի թարմացումը՝ հստակ սահմանվելով անվտանգ վայրերը, այնպես որ յուրաքանչյուր ընտանիքի համար պարզ լինի թե որտեղ են նրանք տարհանվելու անհրաժեշտության դեպքում:

Ձեռք բերվեց և ՀՀ ՏԿԱԻՆ Շիրակի մարզային ՃԿԿ-ում տեղադրվեց Պ166Մ ազդարարման համակարգը, որը հնարավորություն կտա կենտրոնացնել մարզի բոլոր համայնքների ազդարարման միջոցների կառավարումը ՃԿԿ-ում՝ անհրաժեշտության դեպքում կենտրոնացված ազդարարում իրականացնելու և արձագանքման գործողությունները և դրանց համակարգումը արդյունավետ կազմակերպելու համար:

Շիրակի մարզային ՓԾ հետ համատեղ կազմակերպվեց իրազեկման քարոզարշավ ջրածածկման գոտում բնակվող բնակչության համար, որի ժամանակ ներկայացվեցին ջրամբարի հետ կապված վտանգները, ՎԱՀ կարևորությունը, համայնքի բնակչության մասնակցությունը և գործողությունները, առանձնահատուկ նշվեց խոցելի խմբերի և հատուկ կարիքներով մարդկանց նկատմամբ ուշադրության կարևորությունը, ինչպես նաև բնակիչներին բաշխվեց ջրածածկման գոտում բնակվող ընտանիքների ցուցակ, որտեղ առանձին սյունյակներով երևում է խոցելի մարդկանց քանակները ամեն ընտանիքում և նրանցից յուրաքանչյուրի տարհանման վայրը:

Այս նախաձեռնության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ՀՀ ՏԿԱԻՆ և ՀԿԽԸ համատեղ ուժերով հնարավոր դարձավ հիմնել մի համակարգ, որի կառավարումը կենտրոնացված է Շիրակի մարզի Ճգնաժամային կառավարման կենտրոնում և այն առաջինն է Հայաստանում, որը տեղադրվել է ջրամբարի վտանգավոր ջրածածկման գոտում, իսկ կիրառված մոտեցումները կարող են մոդելային դառնալ՝ Հայաստանի այլ վտանգավոր տարածքներում կիրառելու համար:

## Կլիմայի Փոփոխության ադապտացման կենտրոն՝ Լոռու մարզում

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր Խաչի աջակցությամբ «Կառուցենք կայուն և անվտանգ համայնքներ» ծրագրի շրջանակներում, ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղում հիմնում է Կլիմայի Փոփոխության ադապտացման կենտրոն: Կենտրոնի հիմնումը պայմանավորված է մեր տարածաշրջանում ԿՓ ազդեցության հետևանքով բնական վտանգների և աղետների հաճախության և ուժգնության բարձացման և դրանցից բխող հետևանքների մեղմացման անհրաժեշտությամբ: Դրա նպատակն է՝ նպաստել կլիմայի փոփոխության հետևանքով խոցելիության նվազեցմանը Հայաստանում:

Կենտրոնի գործունեությունն իրականացվում է ՀԿԽԸ Լոռու մարզային մասնաճյուղի աշխատակիցների և կամավորների կողմից:

Այն օժանդակում է ազգային, մարզային և տեղական իշխանություններին՝ Կլիմայի փոփոխության մարտահրավերներին դիմակայելու հարցում՝ ուսուցման, խորհրդատվության, քարոզչության և ադապտացման միջոցառումների մշակման և իրականացման միջոցով, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակման, տեղական և միջազգային առաջատար փորձի տարածման միջոցով իր ներդրումն է ունենում ԿՓ հետևանքների մեղմացման և ադապտացման գործում, նպաստում է բնակչության ԿՓ ադապտացման և կենսապայմանների պաշտպանության կարողությունների հզորացմանը, ըստ գործունեության ոլորտների, շեշտը դնելով առավել խոցելի խմբերի վրա, ինչպես նաև տեղական և միջազգային մակարդակում ԿՓ հիմնահարցերով զբաղվող կազմակերպությունների միջև համագործակցության ամրապնդմանը՝ փորձի և տեղեկատվության փոխանակման և համատեղ գործողությունների իրականացման միջոցով:

## Առավել անվտանգ հասանելիություն

Նոյեմբերի 10-12-ը Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աջակցությամբ իրականացրեց Առավել անվտանգ հասանելիության գնահատման

In the frames of "Building Safe and Resilient Communities" project, Emergency Response and Humanitarian Coordination Center in Stepanavan, Lori region was established.

## Early warning system on Mantash reservoir

Targeting communities of “Building safe and resilient communities project”, which is being implemented in Mets Mantash, Panik, Nor Kyank, Beniamin and Azatan communities of Shirak region, are located in the area of primary and secondary flooding of Mantash reservoir. Taking into consideration the fact, a range of measures were undertaken with the view to introduce early warning system and to raise awareness of the population.



For five aforementioned communities mapping was carried out jointly with Shirak region Rescue Department, with calculation of quantities of houses, infrastructures, public facilities and population in the hazardous areas per category, distinguishing vulnerable groups, such as disabled persons, pregnant women, single aged persons, children etc. Furthermore, this was followed by update of evacuation plan jointly with local authorities, clearly specifying safe areas for evacuation, so that each family clearly knows where to evacuate in case of necessity.

P166M alerting system was purchased and installed at Shirak regional CMC of the Ministry of Territorial Administration and Emergency Situations of the Republic of Armenia. The system shall give a possibility to centralize the control over all warning systems of communities in the region in CMC, in order to provide centralized warning and response operation, if necessary, and to organize efficient coordination of such.

Jointly with Shirak Region Rescue Service an awareness raising campaign was organized for residents of flooding area during which hazards, related to the reservoir, as well as the importance of early warning system, participation of residents of the community and their activities were presented, special emphasis was made on the importance of attention to vulnerable groups and people with special needs, as well as the list of families, located in the flooding area was distributed among the residents, where in a separate column the number of vulnerable persons in each family as well as the place of their evacuation was indicated.

## Climate Change Adaptation Center in Lori Region

Armenian Red Cross Society in the frames of “Building safe and resilient communities” project, with the support of Austrian Development Agency and Austrian Red Cross, establishes Climate Change Adaptation Center at Lori Regional Branch.

The establishment of the center is due to the impact of climate change on natural hazards in the region and increase the intensity and frequency of disasters and the need to mitigate the consequences arising therefrom. Its aim is to contribute to the reduction of vulnerability to Climate Change in Armenia.

The center’s activities are carried out by Red Cross staff and volunteers of Lori Regional Branch.

և պլանավորման գործընթաց: Միջոցառումն անցկացնում էին ԱԸ կարողությունների զարգացման աջակցության գծով խորհրդատու, ԱԱՅ փորձագետ, Կատրին Մարի Մարտինը Ժնևի ԿԽՄԿ գրասենյակից և Համագործակցության գծով տարածաշրջանային համակարգող Լիլլի Հեյնրիխսը, Նայրոբիի՝ Քենյայի ԿԽՄԿ գրասենյակից: Գնահատման գործընթացի արդյունքների վրա մշակվեց գործողությունների պլան, որը թույլ կտա զարգացնել Ազգային ընկերության կարողությունները նշված ոլորտում:



## Առաջին օգնությունը ճանապարհա-տրանսպորտային պատահարների ժամանակ

Դեկտեմբերի 23-24-ը ՀԿԽԸ Գլխավոր գրասենյակում «Եվրոպա-Կովկաս-Ասիա տրանսպորտային միջանցք՝ ճանապարհային անվտանգություն 2-րդ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր "Առաջին օգնությունը ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ" թեմայով դասընթաց:

Դասընթացին մասնակցում էին Ճանապարհային ոստիկանություն, Քաղաքապետարանի տրանսպորտի վարչության, Կենտրոն համայնքի թաղապետարանի, Տրանսպորտի նախարարության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության անձնակազմի անդամներ և կամավորներ:

Մասնակիցները հնարավորություն ունեցան սովորելու, թե ինչպես պետք է գործել ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքում, ձեռք բերեցին Առաջին օգնության և արձագանքման հմտությունները:



## Դեկտեմբերի 1, ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

Դեկտեմբերի 1-ին ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ "ՄԻԱՎ, ՁԻԱՀ և Տուբերկուլյոզ" ծրագրի շրջանակներում իրազեկման ակցիաներ էր կազմակերպել Երևանի պետական, Պետական տնտեսագիտական և Պետական Ճարտարագիտական համալսարաններում: Իրազեկման դասընթացների ժամանակ ուսանողներին ներկայացվեցին հիվանդության տարածման ուղիները, վարակից խուսափելու եղանակները և վարակվելու դեպքում ձեռնարկվող քայլերը:

ՀԿԽԸ կամավորները պատասխանեցին նաև ուսանողներին հետաքրքրող հարցերին և խրախուսեցին արյուն հանձնելու, որն անվճար կազմակերպվում էր տեղում՝ ՍՊԻԴ կենտրոնի կողմից:

It supports national, regional and local authorities to meet the challenges of climate change issues in education, counseling, advocacy, and development and implementation of adaptation measures through the development of training manuals, the spread of local and international experience through its contribution to the effects of climate change mitigation and adaptation activities and promote adaptation to climate change in the population's living conditions and strengthen the ability of the activity areas, with emphasis on the most vulnerable groups, as well as local and international level to strengthen cooperation between the organizations dealing with the issues of climate change and experience through information exchange and joint operations.

## Safer Access for NS

On 10-12 November, Armenian Red Cross Society conducted Safer Access Assessment and Planning Workshop with the support of the International Committee of the Red Cross. The facilitators were from ICRC Delegations in Geneve, Swizerland and Kenya, Nairobi, Katrin Mary Martin, Supporting NS Capacity Development Consultant and Lili Hainrichs, Regional Cooperation Coordinator. As a result of the Workshop, Action Plan was developed for Capacity Development in the mentioned field.



## First aid during road accidents

On 23-24 December, in the HQ of ARCS in the frames of "Transport Corridor Europe-Caucasus-Asia, 2nd Road Safety" project was organized training named: "First Aid during Road Accidents".

Representatives of Traffic Police, Municipality Transportation Department, Kentron Administrative District, Ministry of Transport, representatives of non-governmental organizations, as well as staff members and volunteers of Armenian Red Cross Society attended the workshop.

Participants had the opportunity to learn how to act in case of road accidents, acquired first aid and response skills.

## 1 December, World AIDS Day

On 1 December, Armenian Red Cross Society organized awareness sessions in Yerevan State University, State Economic University and State Engineering Universities, in the frames of "HIV, AIDS and TB" project financed by ERNA. During the sessions ARCS volunteers told about how the infection can be transferred, how to behave to be protected, answered the students' questions.

They also encouraged students to take a blood test, which was organized on the site by AIDS center.

